Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
Ընդհանուր նկարագրությունը	Մագիստրոսի կրթական ծրագիրը կառուցված է հետևյալ հիմնական կրթամասերից՝ «Ընդհանուր կառուցամաս», «Հատուկ մասնագիտական կառուցամաս», «Առարկաներ ուսանողի ընտրությամբ», «Պրակտիկա», «Գիտահետազոտական աշխատանք»: Ուսման տևողությունը 1 տարի է՝ 2 կիսամյակով: 1-ին կիսամյակը ներառում է 16 շաբաթ, իսկ 2-րդը՝ 12 շաբաթ: Ծրագիրը բազմաբնագավառ է և ապահովում է անհրաժեշտ կոմպետենցիաներ:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2024/08/մագ-ՖԴՍՄ-առկա.pdf
Շնորհվող աստիճանը	Մանկավարժության մագիստրոս
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
Կրեդիտները	60
Ուսուցման ձևը	Առկա
Ծրագրի տևողությունը	1 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	600 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Ա.1 Սահմանելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի կառավարման և հետազոտման հայեցակարգերը: Ա.2 Հիմնավորելու ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտի հոգեբանամանկավարժական նորարարությունների գործնական նշանակությունը: Ա.3 Մեկնաբանելու ֆիզիկական դաստիարակության և սպորտի հետազոտության մեթոդները և ժամանակակից տեխնոլոգիաները: Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Բ.1. Տարբերակելու ֆիզկուլտուրային կրթության և սպորտային մարզման ոլորտներում կիրառվող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների գիտատեսական հիմնական դրույթները:

	Բ.2.Իրականացնելու կրթական, մարզչական, գիտահետազոտական, կազմակերպչական, տեղեկատվական գործունեություն և մարդու ֆիզիկական, ֆունկցիոնալ վիճակի ու մարզման գործընթացի մոնիթորինգ: Բ.3. Կիրառելու ֆիզիկական դաստիարակության, սպորտային մարզման ժամանակակից տեխնոլոգիաները և ֆիզիկական վերականգման ձևերն ու մոտեցումները՝ կրթական և ուսումնամարզական գործընթացներում: Բ.4. Հետազոտման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ինքնուրույն իրականացնելու գիտական հետազոտություն և վերլուծելու ֆիզիկական դաստիարակության ու սպորտի միջմասնագիտական հետազոտությունների արդյունքները՝ համեմատական ուսումնասիրություններ իրականացնելով տեղական և միջազգային փորձի միջև: Բ.5. Գնահատելու կրթական միջավայրի վերափոխումները՝ օգտագործելով մանկավարժության նորագույն տեսությունների և ՏՀՏ–ների հետազոտահեն գործիքակազմը: Բ.6 Մարզական խմբերում լուծելու տարբեր հոգեբանամանկավարժական և կառավարման խնդիրներ: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Գ.1. Վերլուծելու ոլորտում առկա խնդիրները՝ դրսևորելով, քննադատական և ստեղծագործական մտածողություն, ստանձելով որոշումների կայացման պատասխանատվություն: Գ 2. Հավաքագրելու, մշակելու և օգտագործելու տարբեր հետազոտական տվյալներ՝ միջազգային գիտական և համացանցային աղբյուրներից: Գ.3. Ղեկավարելու թիմի աշխատանքը՝ վերահսկելով ժամանակն ու անհարժեշտ ռեսուրսները: Գ.4. Մայրենի և որևէ օտար լեզվով պատրաստելու հաշվետվություններ, զեկույցներ, հոդվածներ, վարելու բանավեճեր՝ հետազոտական աշխատանքների արդյունքների շուրջ:
Աշխատաշուկան	Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան հետագայում աշխատել՝ հանրակրթական դպրոցներում՝ որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, սպորտի պետական կառավարման մարմիներում, մարզական կազմակերպություններում, ազգային օլիմպիական կոմիտեում, մարզական ֆեդերացիաներում, ակումբներում, սպորտային ուղղվածությամբ տարբեր հասարակական կազմակերպություններում: